

«Համազգային»ի Արեւելեան Ա.Մ.Ն. Շրջանային Վարչութեան «Մինաս եւ Գոհար Թէօլէօլեան» Ժամանակակից Գրականութեան Մրցանակ 2022

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Արեւելեան Ա.Մ.Ն. Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, որ բացուած է «Մինաս եւ Գոհար Թէօլէօլեան» ժամանակակից գրականութեան 2022թ. մրցոյթը: Նախորդ մրցոյթներուն նման, նախատեսուած են երկու մրցանակներ, մին հայերէնով եւ երկրորդը՝ անգլերէնով գրուած գործերու համար:

Այս մրցանակը կը կրէ հայ գրականութեան երախտաւոր, գրաքննադատ եւ «Հայրենիք» օրաթերթի երկարամեայ խմբագիր, գրականագէտ Մինաս Թէօլէօլեանի ու իր կողակցին՝ հայոց լեզուի եւ գրականութեան վաստակաշատ ուսուցչուհի Գոհար Թէօլէօլեանի անունը:

Մրցանակը կը շնորհուի Հիւսիսային Ամերիկա բնակող շնորհալի հեղինակներու: «Համազգային»ի հիմնական նպատակն է այս մրցանակի միջոցով քաջալերել ու լայն հանրութեան հասցնել հայերէն լեզուով կամ հայկական նիւթերու մասին գրող հեղինակներուն: Գրութիւնները կրնան ներկայացուիլ գրական որեւէ ձեւով՝ բանաստեղծութիւն, պատմուածք, վէպ, նորավէպ, թատրերգութիւն, ինչպէս նաեւ յուշագրութիւն, մտորումներ եւ գրական վերլուծութիւններ: Նիւթերը կրնան ըլլալ ցարդ անտիպ, կամ տպագրուած 2020-2021 թուականներուն: Մրցոյթը շահող երկու յաղթողներէն իւրաքանչիւրը կը պարգեւատրուի 1.500 տոլարով:

Դատական կազմի անդամներն են. Դոկտ. Միմա Աբրահամեան (Մոնթրէալ), Դոկտ. Վարդան Մատթէոսեան (Նիւ Ճըրզի), Դոկտ. Կարէն Զալլաթեան (Գալիֆորնիա), Անուշ Ակներեան (Մոնթրէալ) եւ Դոկտ. Միրնա Տուզճեան (Քալիֆորնիա):

Մրցանակաբաշխումը տեղի պիտի ունենայ 2022 թ. Դեկտեմբերին:

Դիմորդներու (PDF) ստեղծագործութիւնները պէտք է մեզի հասած ըլլան մինչեւ Հոկտեմբեր 15, 2022, հետեւեալ հասցէին. tololyan_award@hamazkayin-usa.org

Դիմորդները պարտին ամբողջացնել մրցոյթի դիմումնագիրը, որուն հայերէն եւ անգլերէն տարբերակները, ինչպէս նաեւ մրցանակաբաշխութեան կանոնները գետեղուած են համացանցի հետեւեալ էջին վրայ. <http://bit.ly/167vSsM>

Այս մրցանակի նիւթական յատկացումը կիրաւորուի Սան Ֆրանսիսքոյաբնակ Տէր եւ Տիկին Եղուարդ եւ Վերժին Մարրլեաններու առատաձեռնութեան շնորհիւ:

«Համազգային»ի Արեւելեան Ա.Մ.Ն. Շրջանային Վարչութիւն